

նոցա վարժեցնել որ ուսմանց ծրագրին կուրորեն հետևելու սովորեն: «Թողովներում պէտք է կարգալ նախ «յաղագս ուսուցչաց» կանոններից մի քանիսը մանաւանդ ինչ որ վերաբերում է պարկեշտութեան և հրահանգուած բարբին: Ապա տեսուչը թող յիշեցնէ, թէ ամենայն որ ազատութիւն ունի յայտնի խօսելու: Թէ արդեօք ինչ դժուարութիւնների է հանդիպում կանոնների մէջ, կամ որ բաները չի կատարում: Արդէն ինքնին տարակուսութիւն է առաջ գալիս, եթէ տեսուչը հարկադրուած է լինում յիշեցնել, թէ խօսքի ազատութիւն է թող տրուած: Իսկ արդեօք որ և է երիտասարդ ուսուցիչ քաջութիւն կունենայ անկեղծօրէն համոզումները յայտնելու կամ խոստովանելու, թէ դարաւոր փորձերով նուիրագործած ծրագրից այս կամ այն կէտը անկատար է թողնում: Ինչպէս և միաբանութեան հնազանդ զաւակ չի կոչուի և ուրիմն իւր վերայ այնուհետև հակողութիւնը աւելի պիտի բազմապատկուի, որով արդէն լաւ կըշտացած է: Աշակերտը նորան լրտեսում է, պաշտօնակիցները նորա ախոյեաններն են, վերատեսուչը նորա առաջնորդողը է, ամէն կողմերից մատնութիւններ են թափվում: Աւստի և ճիզուհիների մէջ ուսուցիչները մեծ վարկ չեն վայելում, բացի ուսուցչապետներից և հետադուրութեան ուսուցչից:

Մնում է յիշատակել աշակերտների իբրև ուսուցիչ օգնականի գործածութիւնը, որ ճիզուհիների մէջ մինչև այսօր սովորական կարգ է: Յառաջդէմ աշակերտները պատուի են արժանանում փոքրիկ ծառայութիւններ կատարելու ոչ միայն արտաքին կարգապահութեան համար, այլ և դաստիարակութեան և ուսուցման օգնելու: Աւսուցիչը նշանակում է տասնապետներ, Գոքա պէտք է լսեն անգիր սերտածները, շարադրութիւններ հաւաքեն ուսուցչին յանձնելու համար, մի տետրի մէջ նշանակեն, թէ այսանուն աշակերտի յիշողութիւնը քանի անգամ կանգ է առել, ո՞վ չի կատարել գրաւոր աշխատութիւնը կամ հետք չի բերել սեւագիրը: Ինչ և ուրիշ բաներ էլ պէտք է գիտէ, եթէ ուսուցչից յատուկ պատուէր ստանայ: Գասարանի մէջ շատ տասնապետներ են կարգվում աստիճաններով բաշխուած: Կարգապահը բարձրագունին պէտք է լսէ և համար ու հաշիւ տայ: Աւսուցիչը բոլորի վերայ է հսկում և փորձում է նոցա հաւատարմութիւնը: Այս կարգը Բէլ-Լանկաստի բազմամարդ գասարաններում օգտուել է շնորհով և կատարվում: Բայց ճիզուհիները մի աշակերտին չափազանցութեամբ միւսներից աւելի իշխանութիւն են տալիս: Նոցա մէջ այս կարգը մի գլխաւոր նպատակ ունի—գրգռել աշակերտի փառամտութիւնը:

Վիսաւորելով բոլոր ասածները, ճիզուհիների մանկավարժութիւնը անշուշտ ընթացում է ըստ ամեն-

նայնի մանրամասն խորհած ծրագրով: Այդ մի հպարտ ամբարձած շինութիւն է, ուր ամենայն նրբութիւն ճիշտ չափուած է և ճարտարութեամբ տեղը գրուած: Աւերան չեն պակասում նաև այլընդայլոյ զարդեր և սեթևեթ գրուադներ:

Սակայն չէնքը միջնագարեան է և նեղ է այն առարկաների համար, որ արդի ժամանակը անհրաժեշտ է սեպում կրթութիւնն ու զիտութիւնը ծաղկեցնելու համար: Եւ ոչ մակարդակը կարող է փոխուիլ՝ առանց ամբողջ չէնքը փլուցանելու: Իսկ չէնքի մի քանի նոր յաւելուածներով՝ ինչպէս որ միաբանութիւնը փորձեց՝ այլ ևս անհնարին է լրացնել մեր ժամանակի պահանջները:

Կար ժամանակ, երբ որ ճիզուհիները կաթուղի եկեղեցու հմտագոյն ուսուցիչներ էին: Սակայն այնուհետև ուսուցման գործը այնպէս յառաջադիմել է ճոխացել է, որ անկարելի է այդ բոլորը արհամարհել, առանց մեծ վիճ բաց անելու զիտութեան և աղգերի կրթութեան մէջ:

Այսուհետև այն հասարակութիւնը, որ ճիզուհիների ձեռքին է թողնում կրթութիւնը, գարբերով յետ է տանում իւր լուսաւորութիւնը և յառաջագիտութեան գլխին մահու վճիռ է հատանում:

Իսկ զիջումներ անելու՝ ճիզուհիք ոչ կարող է և ոչ կուզենայ: Ապագան ցոյց կու տայ, թէ ճիզուհիների արբանքից մէկի խօսքը միաբանութեան զգուծեան մասին ինչպէս պիտի կատարուի: «Թող կամ ամբողջապէս մնան, ինչպէս որ են, կամ բնաւ ոչ»:

Մ. Մ.

ԱՇԽԱՏՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍ:

I.

ԲՈՒՈՐ արուեստներից ամենակարևորը աշխատելու արուեստն է: Պէտք է միայն մի անգամ լաւ իւրացնել այն, որպէս զի հեշտութեամբ ձեռք բերուի ամէն զիտութիւն և վարժութիւն: Սակայն համեմատաբար շատ քերքը տէր են այս արուեստին և մինչև անգամ սյժմ, երբ «աշխատանքի» և «աշխատանքների» մասին խօսում են աւելի քան երբ ևիցէ, չէ կարելի իրօք նկատել, թէ այս արուեստը առանձնապէս տարածուած լինի լինողահակառակն: մեր ժամանակում աւելի

Հանդէս է գալիս որքան կարելի է աւելի քիչ աշխատելու: Կամ աշխատանքին կհանքի միայն որոշ, մի փոքր մասը յաւկացնելու: Իսկ մնացած ժամանակը Հանգստութեան նուիրելու ձգտու մը:

Այսպէս ուրեմն ըստ երևութիւն աշխատանքն ու հանգստութիւնը ընդդիմակաց փոխադարձաբար իրար միտող հասկացողութիւններ են: Այս հարցը ամէնից առաջ պէտք է քննել որովհետեւ միայն աշխատանքը զովաբանելը (որին մենք ամէնքս պատրաստ ենք) քիչ օգուտ կբերէ, չէ որ դորանով անպատճառ աշխատանքի սէր չի զարթնի: Եւ քանի որ առեւտրութիւնը դէպի աշխատանքն այնքան տարածուած չարիք: Համարեա թէ մեր ժամանակի մի հիւանդութիւն է, քանի որ իւրաքանչիւր ոք խօսքով այնքան փառասորում է աշխատանքը, իսկ իրապէս աշխատում է նորանից խոյս տայ՝ հասարակական կեանքի պայմանների որևէ բարեօրժան մասին խօսք չինել չէ կարող: Եւ այդ պայմանները բոլորովին անբարեփոխելի էլ կլինէին: Եթէ աշխատանքն ու հանգստութիւնը յիրաւի իրար հակառակ ինչ ներկայանային: Մենք ամէնքս փափագում ենք հանգստութեան: Այս կարիքը բնական է, և՛ սովորական մահկանացուի և՛ բարձրածոի: Հանձարի համար նա ընդ միշտ լարուած մնալ չէ կարող, մինչև իսկ բանաստեղծութիւնը աւելի բախտաւոր ապագայ բնորոշելու համար ուրիշ խօսք չէ գտել, բայց եթէ «յախտեանական հանդիստ»: Եթէ աշխատանքը անհրաժեշտութիւն է, իսկ հանգստութիւնը նորա հակադրութիւնը, ապա այն ասացուածքը, թէ «ճակատից քրտինքով պէտք է ուտես հացը», իրաւոր մի դառն անէծք է, և հետևաբար երկիրն իրօք ոչ այլ ինչ է, եթէ ոչ թախիծի մի հովիտ: Որովհետեւ այսպիսի դէպքում իւրաքանչիւր սերունդի մէջ միայն քչերը կարող են մարդավայել կեանք անցկացնել և այդ էլ շնորհիւ միայն այն հանգամանքի (իսկ անէծքն էլ իսկապէս հենց այդ է), որ նոքա ստիպում են ուրիշներին իրենց համար աշխատել և իրենց եղբայրներին ստրկութեան լուծի տակ են պահում:

Հին աշխարհի մասնագիրները այսպէս էին մտածում: նոցա կարծիքով բազմութիւ

սարուկների ծանր և յուսահատ աշխատանքը առանձին անհատների իրրև ազատ քաղաքացիների պէտք է հնարաւորութիւն տար տէրութեան քաղաքական կեանքում մասնակցութիւն ունենալու: Ծակ մեր դարում փմեծ հասարակապետութեան քաղաքացիք իրենց պալա ունենալով մինչև իսկ քրիստոնեական եկեղեցոյ պաշտօնեանների՝ ս Գիրքը ձեռքների պաշտպանում էին այն գրութիւնը, թէ որոշեալ մարդկային ցեղեր գատապարտուած են սերունդէ սերունդ մինչև յախտեան ուրիշների համար աշխատելու:

Քաղաքակրթութիւնը միայն հարստութեան գրկում է զարգանում: Եւ ամուս է հարստութիւնը լոկ դրամագլուխների իրար վերայ կռտակուելով: Իսկ դրամագլուխները խոշորանում են նոցա՝ աշխատանքը շահագործելով որոնք դորա համար արժանի վարձատրութիւն չեն ստանում: Հետևաբար կրթութիւնը զարգանում է անարդարութեան հողի վերայ: Այս է հիմքն այն բոլոր գրութիւնների որ մեր ժամանակներում տեղային վեճերի առարկայ են դարձել: Մենք մտադիր չենք այս մեր խնդրին չէ վերաբերում) նոցա համեմատական կամ բացարձակ ճշմարտութիւնը մանրամասնօրէն քննելու, այլ միայն նոցա հաւանականութիւնն ենք ընդունում: Եթէ բոլորն աշխատէին ինչպէս պէտք է, այն ժամանակ սյդպէս կոչուած ընկերավարական հարցը ինքնին վճռուած կլինէր: ամէն ուրիշ վճիռ հազիւ թէ մի բանի հասցնէ: Բայց չեմ կարծում այս երբ և իցէ գլուխ գայ լոկ միայն ստիպման միջոցաւ, և եթէ մինչև անգամ գտնուէին միշտ Ֆիզիքական ստիպման միջոցներ բոլորի համար և բոլորի դէմ՝ շատ կասկածելի էր, թէ սյդպիսի բանի աշխատանքը բեղմնաւոր լինէր: Հետևաբար, ամէն ինչ յանգում է, այն կէտին, որ մարդու մէջ պէտք է դէպի աշխատանքը սէր զարթեցնել: Այս հարցը գնում է մեզ արդէն բուն «մանկավարժական» հողի վերայ:

Աշխատանքի սէրը մեր մէջ զարգանալ կարող է խորհրդածութեան և փորձի ծանապարհով, սովորել սէրը ոչ մի կերպ կարելի չէ, և նորա զարգացման վերայ (ինչպէս դժբախտաբար մենք ամէն օր տեսնում ենք) օրինա-

կը նոյնպէս այդպէս թիւն չէ գործուած Ամէն մէկին փորձը ցոյց կտայ՝ ով կամենայ իւր փրայ փորձել, որ ցանկալի հանգստութիւնը կարելի է դանել ո՛չ թէ կատարեալ կամ բաւ կարելւոյն մեծ հոգեկան և Փիղիբեական անգործութեան՝ այլ ընդհանրապէս մեր հոգեկան և մարմնաւոր ոյժերի հաւասարակչութիւնը գործունէութեան մէջ։ Մարդու ամբողջ քննութիւնը աշխատանքի համար է սահմանուած և անողորմարար վրէժ է լուծում նոցանից, որոնք կամայականօրէն ուզում են փոխել այդ սահմանը։ Ժիշտ է, որ մարդս արտաքսուած է դրախտից և զրկուած է հանգստութեան քայցրութիւնից, բայց Աստուած նորան աշխատել հրամայելով՝ աշխատանքը նորա համար իրրև մխիթարանք անհրաժեշտ գործերց։ Այդ պատճառաւ իսկական հանգստութիւն դանել կարելի է միմիայն գործունէութեան միջավայրում՝ այն է— հոգեկան հանգստութիւն, երբ տեսնում ենք, որ մեր գործը յաջող ընթացք ունի, կամ երբ որևէ ձեռնարկութիւն դուրս ենք հանում, և մարմնական հանգստութիւն՝ քնի ժամանակ, ուտելու ժամանակ և կիրառելին՝ աշխատանքից հանգրստանալու այդ անփոխարինելի օրը։ Գործունէութեան այսպիսի յարատեւ յաջող և միայն բնական ժամանակամիջոցներով ընդհատուող եղանակը ամենարողգաւորն է, որ կարելի է ենթադրել։ Մարդ ուրիշ արտաքին երջանկութիւն չպէտք է ցանկանայ։ Կարելի է մինչև անգամ աւելի հիւսուի գնալ և ասել, որ այս դէպքում նոյն իսկ գործունէութեան բնաւորութիւնը մեծ նշանակութիւն չունի։ Ամէն իսկական գործունէութիւն, որ խաղ չէ, կարող է հետաքրքրական դառնալ, եթէ մարդ միայն լուրջ վերաբարեբութի դէպի այն, ոչ թէ գործունէութեան այս կամ այն եղանակը կամ բնաւորութիւնն է գարձնում մարդուն երջանիկ, այլ այն ուրախարար զիտակցութիւնը, թէ նա աշխատում է և նորա աշխատանքը պատկուած է յաջողութեամբ։

Ամենամեծ անբախտութիւնը, որ պիտի միայն կարող է լինել՝ առանց աշխատանքի կեանքն է, այն կեանքը, որ զրկուած է աշխատանքի պտուղներից։ «Աշխատողները» իրօք անբախտ մարդիկ են, իսկ այդպիսիները բազմաթիւ են

և մինչև իսկ աւելի շատ՝ ազահոլուած, բարձր քան ստորին դասակարգերում։ Չբարեւորները աշխատանքի են դիմում անհրաժեշտութեան ստիպմամբ, մինչ հարուստները համարեա անյոյս կերպով և յաւիտեան դատապարտուած են աղքատութեան։ շնորհիւ վատ դաստիարակութեան նախապաշարմունքների և ամենակարող սովորութեան, որը որոշեալ շրջաններում իսկական աշխատանքն անհնարին է գարձնում։ Մենք ամէն տարի տեսնում ենք, ինչպէս այդ կարգի մարդիկ իրենց ներքին դատարկութիւնը և ձանձրոյթը տանում են ամարանոցներն ու ապք ջրերը, որոնցից ի զուր տեղը վերակենդանութիւն են սպասում։ Սկզբում նոցա բաւական էր ամառը, որպէս զի որ և է Փիղիբեական լարման շնորհիւ, գոնէ ժամանակաւորապէս բժշկուելին իրենց զարհուրելի հիւանդութիւնից՝ պարապութիւնից, այժմ նոքա հարկադրուած են արդէն այդ նպատակի համար գործ դնել նոյնպէս և ձմեռը, և այսպէս շուտով հիւանդանոցները, որոնցով լիքն են Եւրոպայի ամենալաւ տեղերը, ամբողջ տարին բաց կլինին այդ բոլոր անհանգիստ մարդոց բազմութեան համար, որոնք ամէն տեղ հանգստութիւն են որոնում։ Բայց ո՛չ մի տեղ գտնել չեն կարողանում, որովհետև չեն որոնում այն աշխատանքի մէջ։ «Վեց օր պէտք է աշխատես», ոչ աւելի և ոչ պակաս։ Այս դեղով կարելի կլինէր մեր ժամանակի նեարդային հիւանդութիւնների մեծ մասը բժշկել, որքան և նոքա կարծես մի անէժք են գարձել, որ պարպ ծնօղները ժառանգութիւն են թողնում յետնորդներին։ Ընդհանրապէս մեր ցանկութիւնը պէտք է լինի, ոչ թէ վայելել կեանք, այլ օգուտ քաղել նորանից։ Ով այս չէ խոստովանում, նա արդէն կորցրել է հոգւոյ արիութիւնը և անտեղի է այլ ևս կարծել, թէ կկարողանայ իւր Փիղիբեական առողջութիւնը այնքան պահպանել, որքան այդ թոյլ կտար իւր բնութիւնը, եթէ կեանքի կանոնաւոր եղանակ ունենար։

Այստեղ պէտք է մի փոքրիկ բացատրութիւն արուի։ Ամէն աշխատանք միատեսակ չէ, կայ աշխատանք, որ ցոյցի համար է միայն աչք փակելու համար։ Այս կարգին են պատ-

կանում մի քանի այսպէս կոչուած «կանանց ձեռագործներ» զինուորախաղը ինչպէս էր առաջ առհասարակ զինուորական արուեստը «գեղարուեստի» վերաբերեալ պարապմունքներէ մեծ մասը ինչպէս օրինակ վատ և անօգուտ նուագածութիւնը դաշնամուրի վերայ՝ որ սորգութիւնը մի որոշ աստիճան և ընդհանրապէս բոլոր խաղերը ի վերջոյ սոցա թուումն է նաև իւր սեփական կայքի «կոտավարութիւնը» Գործունեայ և խոհեմ մարդը կարող է իւր համար աւելի պատշաճաւոր գրադմունք գտնել: *

Միևնոյն պատճառով մեքենայի միջոցաւ կատարած աշխատանքը մեքենական և առհասարակ կտոր—կտոր գործը մարդուն այնքան քիչ բաւականութիւն են պատճառում և արհեստաւորը կամ զիւղական բանուորը շատ աւելի գոհ վիճակ ունի քան գործարանի աշխատաւորը որը և վրդովում է հասարակական հանգստութիւնը: Բանն այն է որ այս վերջինը իւր աշխատանքի արդիւնքները խիստ քիչ է տեսնում: գործում է մեքենան —նա միմիայն նորա օժանդակող գործիքն է: Բանուորը միշտ զրազուած է որ և է անիւ ուղղելով բայց երբէք ամբողջ ժամացոյց չէ պատրաստում որ իբրև արուեստի պտուղ իբրև մարդկային աշխատանքի իսկական արգասիք՝ կարող է նորան բաւականութիւն պատճառել: Այսպիսի մեքենական աշխատանքը վիրաւորում է մարդկային արժանապատւութեան բնական զգացումը որ անկասկած իւրաքանչիւր նոյն իսկ ամենաստոր մարդուն յատուկ է և նորան իսկական բաւականութիւն չի տալիս:

* Եվարացի պատուր ժրատիր իւր մի հայրենակից սպայի մասին պատմում է որ երբոր սարիներ զբաղուած լինելով միայն իւր միօրինակ ծառայութեան պաշտօնական գործերի անբերի կատարմամբ՝ իրեն անբախտ երգում, բայց իւր հասկումով քե ինչու և անբախտ: Պատուրը որին սպան ղեկում է այս կարգով փորոցից կանից մի աղիկ և խոսուցաւ նորան մի արծար սալ երև անբող օրը որտոյ վրայ հանգիստ նստեալ արծարի գաղաթ մտնել: Ինչպէս նա նախատեսել էր աղիկը կես ժամ անցած ղոճոճութեամբ դիւն նգից գոարը ստերով որ ինք չի ուզում ժամանակը այսպիսի անօգուտ աշխատանքով վատնել և չի էլ հաւատում որ այսպիսի գործի համար փող կվճարեն:—Ահն քե ինչու շատ մարդիկ ոչ մի բուսականութիւն չեն զգում իւր և նկ «աշխատանքից»:

Եւ ընդհանրապէս բախտաւոր են այն մարդիկ որոնք կատարելապէս տարւում են իրենց աշխատանքով որոնք կարող են նրա մէջ արծածել իրենց ուժերը: Այսպէս են օրինակ նկարիչները որոնք պէտք է ամբողջապէս խորատուզուին իրենց առարկայի մէջ, եթէ կամենում են լաւ ըմբռնել այն և պատկերացնել բոլոր լրութեամբ: զիտնականները որոնք բացի իւրեանց գործից համարեա ուրիշ ոչինչ բան չեն տեսնում: այլ և զանազան «արտաքոյ կարգի» մարդիկ որոնք իրենց գործունէութեան նեղ շրջանի սահմաններում երբեմն ստեղծում են իրենց համար մի առանձին փոքրիկ աշխարհ: Սոքա բոլորը՝ առարկայօրէն առած զուցէ և սխալ կերպով ձգտում են յառաջ բերել բուն արդիւնաւոր օգտաւէտ և մարդոց համար աննշտ ժեշտ աշխատանք, և շատերը նոցանից այսպիսի մշտական լարուած և զուցէ մարմնական առողջութեան ոչ բոլորովին օգտակար գործունէութեան մէջ մինչև խորին ծերութիւն են հասնում: մինչդեռ շատ պարապ ու հարուստ աշխարհի մարդիկ և ժամանակակից արհիւններ մենք սկզբունքի տեսակետով ամէնից աւելի քիչ աշխատող դասակարգն ենք օրինակ բերում) շարունակ իրենց քայքայեալ առողջութեան յետեից են ընկած:

Մեր ժամանակում պէտք է ամէնից աւելի հոգալ տարածելու այն համոզմունքը որ առանց բացառութեան բոլոր մարդոց մարմնական և հոգեկան առողջութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է նպատակայարմար աշխատանք և որ ուրեմն սա ներկայանում է այս պատճառաւ իբրև նոցա երջանկութեան պայմանը:

Սրա անհրաժեշտ հետեանքն այն կլինի որ պարապ մարդիկ պարապ հենց իրենց կոչումով անկասկած այլ ևս արտօնեալ դասակարգ չեն համարուի և կլինին միայն այն ինչ որ են իրօք՝ մտաւորապէս խակ և վատառողջ մարդիկ որոնք զրկուած են կենսիկ իսկական և կանոնաւոր եզանակն ըմբռնելու կարողութիւնից: Հենց որ այսպիսի հայեացք արտափայլի սովորութիւնների ընդհանուր հաստատուն համոզման արտայայտութիւններէ մէջ՝ այն ժամանակ և միայն այն ժամա-

նակ կհասնի մարդկային կեանքի մի լուսազոյն շրջան: Իսկ մինչև այս ժամանակը աշխարհը կհեծէ մարդոց մի մասի չափազանց և միւս մասի պակաս աշխատութիւնից, և և զեռ մեծ հարց է, արդեօք որը նոցանից, որոնք փոխադարձաբար ազդում են միմեանց վրայ՝ աւելի զժրախտ է:

Ինչո՞ւ կարելի է հարցնեն, այս գրութիւնները որոնց ուղիղ լինելը հազարաւոր տարիների փորձով ապացուցուել է և որ մեզանից ամէն մէկն զգում է, երբ աշխատում է կամ չէ աշխատում՝ ինչո՞ւ այն ճշմարտութիւնները, որ բոլոր կրօններն ու փիլիսոփաները քարոզում են՝ միս ու արիւն չեն դարձել մարդոց մէջ: Ինչո՞ւ մենք օրինակի համար տեսնում ենք հազարաւոր «տիկիներ», որոնք խիստ շատ զբաղւում են ս. Գրքով, բայց անվրդով խաղաղութեամբ, հակառակ այնտեղ կատարելապէս պարզ կերպով դրուած պատուիրանին՝ աշխատում են շարափը շատ շատ մի օր միայն, և կամ բոլորովին ոչինչ չեն շինում, և ամբողջ վեց օր հանգստութեան են նստիրուած: Այս յառաջանում է զլսաւորապէս աշխատանքի անկանոն ըստանումից եւ գործաղորութիւնից, որ և այդ պատճառաւ յիրաւի մի բեռն է դառնում: Հենց սրանով մենք վերագառնում ենք մեր տուած վերնազրի բացատրութեան: *



ԴԱՇՏԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԽԵԼԱՑԻ ՄԻՋՈՑՆԵՐ.



* Բանի որ զեռ աշխարհիս երեսին սակաւ բնակութիւն կար, մշակելու համար ազատ հողեր շատ կային, այդ պատճառով էլ դաշտերը մշակում էին բոլորովին նահապետական եղանակով, այն է՝ անգործ հողը վարում էին և երեք տարի առաջ հունձ ստանալուց յետոյ մօտ տասն և հինգ տարի շարունակ երեսի վերայ էին թողնում և գործ գնում միմիայն իրրե արօտատեղի, իսկ ցանկելու համար վերցնում էին մի ուրիշ կամ բոլորովին անգործ և կամ

* Թարգմ. գերմանացի ուսուցչապետ Հիլրի Շապտե գրից:

մօտ տասն և հինգ տարի անընդհատ հանգստութիւն վայելած հող: Պարզ է, որ այն ժամանակ երկրագործ մարդիկ կարէք չզգալով, չէին կարող գաղափար նաև ունենալ հողեր պարարտացնելու մասին: Այդպէս երկար ժամանակ առանց գործածութեան ընկած հողը ուղղակի միջնորդաց կամ իր վերայ արածող անասունների աղբից սնունդ էր ստանում: այնպէս որ մինչև նրա երկրորդ անգամ մշակելն արդէն բուսական շահով ոյժ հաւաքած կլինէր: Երկրագործութեան այս եղանակը շատ և շատ հող կպահանջէր, այն ինչ մարդիկ քանի գնում բազմանում էին և տարեցատարի երկիրը նրանց համար աւելի և աւելի նեղ էր դառնում: ուստի և պահանջ զգացին փոխել երկրագործութեան այդ ձևը, ներկայումս այդ հին ձևի երկրագործութեան մասին թէ Եւրոպայում և թէ բուն Ռուսաստանի նահանգներում յիշատակութիւն անգամ չկայ: Եւրոպանչիւր մարդ մի որոշ կտոր հող ունի, որից օգտուել կարող է, Այժմ՝ մինչև իսկ երկրագործութեան այն եղանակը, որով արաք երկու տարին մի անգամ հանգիստ է առնում, շատ երկրների համար հողի պակասութեան պատճառով դարձեալ անյարմար է համարուած: Աշխատում են առհասարակ գտնել երկրագործութեան մի նոր եղանակ, որով մարդիկ հնարաւորութիւն ունենան օգտուել ամեն մի հողից ամենայն տարի, Արևմտեան Եւրոպայի մի քանի տեղերում արդէն անցեալ դարու վերջերից ընդունուած է երկրագործութեան այդպիսի եղանակ, որով հողը երբէք հանգիստ չի առնում: այն ինչ Ռուսաստանում այժմ գործադրուած է զեռ այն եղանակը (паровая или трехпольная система), որով ամենայն տարի դաշտի մի երրորդ մասը բոլորովին պարապ է մնում: Գորա փոխարէն նոր եղանակով ամբողջ հողը ըստանում են մի քանի մասերի և միշտ հօցահատիկներից յետոյ ցանում են առոյտ (եօնջայ), Բսան տարի չի անցնի, և սակաւ հող ունեցող երկրներում վաղուց ընդունուած երկրագործութեան այս եղանակը կփոխարինէ ամբողջ Ռուսաստանում այժմ գործադրուող եղանակին, ինչպէս մի ժամանակ այժմեան եղանակը փոխարինեց հին-նահապետականին: Եւ այս բոլոր փոփոխութեանց պատճառը հողի սակաւութիւնն է, Այսբան պարզ է, որ մի քանի տարի գործելուց յետոյ երկիրն պէտք է մի կերպ վերադառնել իր կորցրած ոյժերը, որովհետև հարեւրաւոր փութեամբ հացահատիկները և յարգը միմիայն օգից չեն ստացել իւրեանց սնունդը, երկիրը իւր ամենալաւ հիւթերը նոցա համար է գործադրել, Եթէ սկսենք միշտ նրանից սնունդ պահանջել, հանգիստ տալով միմիայն իւրաքանչիւր երկու տարին մի անգամ, որքան և պտղաւետ լինի, այնուամենայնիւ նրա ոյժը զնալով կնուազի:

Պէտք է զարմանալ զեռ մեր երկրի այդ սու-